ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հուլիս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 110.4%, 2022թ. հունվար-հուլիսին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 113.2 %, իսկ 2021թ. հունվար-հուլիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-հուլիսին կազմել է 1 տրլն 384 մլրդ 262.1 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 25 մլրդ 509.7 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 158 մլրդ 535.6մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հուլիսին կազմել է 222 մլրդ 478.7 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 31 մլրդ 926 մլն և 61 մլրդ 877 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հուլիսին կազմել է 2 տրիլիոն 759 մլրդ 104.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 554 մլրդ 159.3 մլն և 987 մլրդ 338.8 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հուլիսին կազմել է 1 տրիլիոն 689 մլրդ 352,4 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 326 մլրդ 614,5 մլն և 662 մլրդ 836,7 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 100.5 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107 %-ի և 102.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 117.2 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113,6 %-ի և 108.8-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 123 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.5 %-ի և 107.5 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 114.9 %, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 127.5 %-ի և 104.5 %-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-հուլիսին կազմել է 271 մլրդ 503.6 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 59 մլրդ 386.4 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 76 մլրդ 180.4 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հուլիսին կազմել է 911 մլրդ 902. 1 մլն դրամ, ինչը 2022 թ և 2021 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 40 մլրդ 537.2 մլն և 206 մլրդ 195.2 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2023թ. հունվար-հուլիսին կազմել է 184 մլրդ 26.7 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2022թ. ցուցանիշից պակաս է 8 մլրդ 198.8 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 24 մլրդ 679.7 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հուլիսին կազմել է 16 մլրդ 829.7 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 538.3 մլն և 3 մլրդ 841.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 94.1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 90.9%-ի և 107.3 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 102.8 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.4 %-ի և 98.9 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմաբ կազմել է 100.2 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.6 %-ի և 109.1 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 106.6 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.5%-ի և 107.2%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ



Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հուլիսին կազմել է 156 մլրդ 783,0մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 10 մլրդ, 109.3 մլն և 15 մլրդ 569.3 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հուլիսին կազմել է 353 մլրդ 712.8 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 122 մլրդ 273,2 մլն և 174 մլրդ 909.մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-հուլիսին կազմել է 449 մլրդ 131 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 32 մլրդ 527.9 մլն և 176 մլրդ 994.5 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 106,5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107 %-ի և 64.7 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 152,7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 129.5 % և 112,8 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-հուլիսին 2022թ. հունվար-հուլիսի նկատմամբ կազմել է 93.5 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 143.6%-ի և 102.6 %-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. հուլիսին 2022թ. հուլիսի նկատմամբ կազմել է 103.6%, 2022թ. հուլիսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 108.3%, 2021թ. հուլիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.1%: ՍԳԻ-ն 2023թ. հուլիսին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 96.7%, 2022թ. հուլիսին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 104.9%, 2021թ. մայիսին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 103,3%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. հուլիսի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 267 մլրդ 518 մլն դրամ, ինչը 159 մլրդ 692 մլն դրամով կամ 14.4 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 59 մլրդ 404 մլն դրամով կամ 4,9 %-ով 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. հուլիսի վերջի դրությամբ կազմել է 64156 մարդ, ինչը 7112 մարդով կամ 16.9%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 26184 մարդով կամ 29 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. հուլսի դրությամբ կազմել է 44470 մարդ, ինչը 8148 մարդով կամ 15.5 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 16796 մարդով կամ 27.4 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-հուլիսին կազմել է 10 մլրդ 377.6 մլն. դոլար, ինչը 3 մլրդ 996.3 մլն դոլարով կամ 62.6 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6 մլրդ 73. 2 մլն. դոլարով 141.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ. հուլիսին կազմել է է - 2 մլրդ 690.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 52 մլն դոլարով կամ 64.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 665.2 մլն դոլարով կամ 162 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. հուլիսին կազմել է 3 մլրդ.843.6 մլն դոլար, ինչը 1 մլրդ 472.1 մլն.դոլարով կամ 62.1 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 204 մլն դոլարով կամ 134.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. հուլիսին կազմել է 6 մլրդ 534 մլն դոլար, ինչը 2 մլրդ 524.2 մլն. դոլարով կամ 63 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3 մլրդ 869.2 մլն դոլարով կամ 145.2 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-հուլիսին կազմել է 262591 դրամ, ինչը 40908 դրամով կամ 18.5 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 64710 դրամով կամ 32 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 96 մլրդ 433.9 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝11 մլրդ 517.2 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -107,951.1 մլն դրամ: 2022թ. հունվար-հուլիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 61 մլրդ 959.4 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 46,674.3 և -108,633.7 մլն դրամ: 2021թ. հունվար-հուլիսին պետական բյուջեի պակասուրդը կազմել է -131մլրդ 459.7 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -132,749.6 և 264,209.3 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ